

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին**

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքի (6 հունիսի 2000 թվական, ՀՕ-83) 102-րդ հոդվածի 1-ին մասի աղյուսակում, ըստ ԱՏԳ ԱԱ-ի համապատասխան տողերի, կատարել հետեւյալ փոփոխությունները եւ լրացումները.

<b>Ճածկագիրն ըստ ԱՏԳ ԱԱ</b>	<b>Ապրանքի նկարագիրը</b>	<b>Ներմուծում (%)</b>	<b>Արտահանում (%)</b>
0401	Կաթ եւ սերուլցք, ոչ խտացրած, առանց շաքարի եւ այլ քաղցրացնող նյութերի	15	0
0402 99	Խտացրած կաթ	15	0
0406	Պանիր եւ կաթնաշոռ	15	0
0407	Թռչունների ձվեր	15	0
0409	Բնական մեղր	15	0
0603	Կտրած ծաղիկներ եւ կոկոններ, որոնք պիտանի են ծաղկեփնջերի պատրաստման եւ այլ դեկորատիվ նպատակների համար, բնական, չորացրած, ներկած, սպիտակեցված, ներծծված կամ այլ կերպ պատրաստված	15	0
0901 21 000	Բոված սուրճ կոֆեինով	15	0
0901 22 000	Բոված սուրճ առանց կոֆեինի	15	0
0901 90	այլ	15	0
1101	Ցորենի ալյուր կամ տարեկանի ալյուր	15	0
1102	Այլ հացազգիներից ստացված ալյուր, բացառությամբ ցորենի	15	0

	ալյուրը կամ տարեկանի ալյուրը		
1601	Երշիկեղեն եւ մսից պատրաստված համանման այլ մթերքներ	15	0
1602	Մսից, անասունի ներքին օրգաններից, գլխից, վերջույթներից կամ արյունից պատրաստված պատրաստի կամ պահածոյացված ապրանքներ	15	0
1704	Շաքարավազից պատրաստված հրուշակեղեն (ներառյալ սպիտակ շոկոլադը), որոնք չեն պարունակում կակաո	15	0
1806	Շոկոլադ եւ այլ պատրաստի սննդամթերք, որոնք կակաո են պարունակում	15	0
1902	Ջերմային մշակման ենթարկված կամ չենթարկված մակարոնային արտադրանք, (մսից կամ այլ արտադրանքից պատրաստված) լցոնվածքով կամ առանց լցոնվածքի, պատրաստված այլ կերպ, այնպիսիք ինչպիսին են սպագետտին, մակարոնը, արիշտան, եղջյուրիկներ մակարոնի տեսակը, ալյուրից պատրաստվող արտադրանք, որին ավելացվում է պանիր, կարտոֆիլ եւ ձու, տարբեր լցոնվածքներով խմորից պատրաստված արտադրանք (ռավիոլի), կապլեոնին, հացազգիներից պատրաստված ուտեստը (կուսկուս) պատրաստ կամ անպատրաստի, սննդում օգտագործելու համար	15	0
1905	Հաց, ալյուրից պատրաստված արտադրանք, խմորեղեն, թխվածքաբլիթ եւ կակո պարունակող կամ չպարունակող հացաթխվածքներ կամ ալյուրից պատրաստված արտադրանք, վաֆլու շերտեր, դատարկ պարկուճներ, որոնք պիտանի են դեղագործության մեջ օգտագործելու, վաֆլու շերտեր, որոնք նախատեսված են փաթաթելու համար, բրնձի թուղթ (բարձրորակ, փխրուն, բարակ, սպիտակ գույնի թուղթ խորթութորդ մակերեսով, որը նման է ծծան թղթին) եւ համանման արտադրանք	15	0
2001	Մրգեր, բանջարեղեն, ընկույզ եւ բույսերի այլ ուտելի մասերը, որոնք պատրաստված կամ պահածոյացված են քացախի կամ քացախաթթվի ավելացմամբ	15	0

2002	Տոմատ	15	0
2004	Այլ սառեցված բանջարեղեն, որը պատրաստված կամ պահածոյացված է քացախի կամ քացախաթթվի ավելացմամբ, բացի 2006 ապրանքային դասակարգման ապրանքներից	15	0
2005	Այլ ոչ սառեցված բանջարեղեն, որը պատրաստված կամ պահածոյացված է քացախի կամ քացախաթթվի ավելացմամբ, ոչ սառեցված բացի 2006 ապրանքային դասակարգման ապրանքներից	15	0
2007	Ջեմ, մրգային դոնդող, մարմելադ, մրգային կամ ընկույզից պատրաստված պյուրե, մրգային կամ ընկույզից պատրաստված մածուկ, որոնք ստացվել են ջերմային մշակման արդյունքում, այդ թվում նաեւ շաքարի եւ այլ քաղցրացնող նյութերի ավելացմամբ	15	0
2009	Մրգերից եւ բանջարեղեններից ստացված հյութեր, առանց խմորման եւ սպիրտ չպարունակող, հավելմամբ եւ առանց հավելման	15	0
2101 11	Լուծվող սուրճ	15	0
2103	Սոուսների պատրաստման համար անհրաժեշտ հումքեր եւ պատրաստի սոուսներ, համային հավելումներ եւ խառը համեմունքներ, մանանեխի փոշի եւ պատրաստի մանանեխ	15	0
2105	Պաղպաղակ եւ կերակրի համար նախատեսված սառույցի այլ տեսակներ	15	0
2201 10	Ջրեր, ներառյալ բնական կամ արհեստական, հանքային, գազավորված, առանց շաքարավազի եւ այլ քաղցրացնող նյութերի ավելացման	15	0
2202	Ջրեր, ներառյալ հանքային կամ գազավորված (Լիմոնադ, Կոլա) առանց շաքարավազի եւ այլ քաղցրացնող նյութերի ավելացման	15	0
2501 00 91	Սննդի համար նախատեսված աղ	15	0
2515	Մարմար, տրավերտին կամ կրային տուֆ, Էկատուսին եւ կրաքարի այլ տեսակներ հուշարձանների եւ շինարարության համար, որոնց	15	0

	տեսակարար կշիռը 2,5 կգ եւ ավելի Է եւ ավաբաստր		
2516	Գրանիտ, ծիրանաքար, բազալտ եւ ավազաքար, հուշարձանների եւ շինարարության համար նախատեսված քար, մանրացված եւ ոչ մանրացված	15	0
2523	Պորտլանդ ցեմենտ, կավահողային ցեմենտ, խարամային ցեմենտ	15	0
4818 10	Չուգարանի թուղթ	15	0
4818 20	Թաշկինակներ, կոսմետիկ անձեռոցիկներ կամ դեմքի համար նախատեսված անձեռոցիկներ եւ սրբիչներ	15	0
4819	Խաղաքարտի տուփ, արկղեր, պարկեր, փաթեթներ եւ փաթեթավորման համար նախատեսված թղթից, սովարաթղթից, ցելյուլոզային բամբակից պատրաստված այլ նյութեր, քարտադարանների արկղեր, նամակների համար նախատեսված դարակաշարեր, սովարաթղթից եւ թղթից պատրաստված համանման նյութեր	15	0
61	Հագուստի տարրեր եւ պարագաներ, տրիկոտաժե, մեքենայով գործված կամ ձեռագործ	15	0
62	Հագուստի տարրեր եւ պարագաներ, բացի տրիկոտաժից, մեքենայով կամ ձեռագործ	15	0
64	Կոշիկ (բացի թիվ 6406 ապրանքային դասակարգումից)	15	0
6802	Մշակված քար (բացի թերթաքարից) հուշարձանների եւ շինարարության համար, նրանից պատրաստված նյութեր, բացի թիվ 6801 ապրանքային դասակարգման ապրանքներից, խճանկարների համար նախատեսված խորանարդիկներ եւ բնական քարի հիման վրա պատրաստված համանման նյութեր (ներառյալ թերթաքարը) կամ առանց բնական քարի, բնական քարի հատիկները, փշրանքները եւ փոշին (ներառյալ թերթաքարը) արհեստական ձեւով ներկածները	15	0
7101	Բնական կամ մշակված մարգարիտ, հղկված կամ առանց հղկելու, դասակարգված կամ ոչ դասակարգված, բայց չշարված, չշտկված,	15	0

	չամրացված, բնական կամ չմշակված մարգարիտ ժամանակավորապես շարված տեղափոխման հարմարավետության համար		
7114	Ոսկյա կամ արծաթյա իրեր, թանկարժեք մետաղներից պատրաստված կամ թանկարժեք մետաղներով երեսպատված մետաղներ	15	0
7115	Թանկարժեք մետաղներից պատրաստված կամ թանկարժեք մետաղներով երեսպատված այլ իրեր	15	0
9401	Կահույք ( բացի թիվ 9402 ապրանքային դասակարգման մեջ նշված կահույքը), մահճակալի փոխակերպվող կամ չփոխակերպվող կահույք կամ նրա մասերը	15	0
9403	Կահույք եւ նրա այլ մասերը	15	0

**Յոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

### **ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**

#### **«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՔԱՍՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ԱՆՀՐԱԺԵՆՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Առաջարկվող օրենքի նախագծի նպատակն է Հայաստանի Հանրապետության Մաքսային օրենսգրքով սահմանված մեխանիզմներով պաշտպանել տեղական արտադրողներին: Հայաստանի Հանրապետության տարածքում արտադրվող բոլոր ապրանքների ներմուծման դեպքում դրանց նկատմամբ նախատեսվում է կիրառել 5%-ով ավել մաքսատուրք՝ ներկայումս գործող 10%-ի փոխարեն 15%:

Ի դեպ, սա այն նվազագույն հնարավորություններից մեկն է, որ մեր պետությունը կարող է անել ի պաշտպանություն տեղական արտադրողի:

Օրենքի փոփոխությունը որեւէ կերպ չի հակասում եւ չի խախտում մեր երկրի կողմից միջազգային կառույցների նկատմամբ ստանձնած որեւէ պարտավորության:

Օրինագիծը ուղղված է նաեւ ներքին շուկայում տեղական արտադրողին ներմուծողների դեմպինգային քաղաքականությունից պաշտպանելուն:

Հայաստանի Հանրապետություն հիմնական ապրանքները ներմուծվում են ԱՊՀ երկրներից: ԱՊՀ երկրներից ներկրված ապրանքների համար ներմուծողի կողմից ծագման սերտիֆիկատ ներկայացնելու դեպքում ներմուծված ապրանքները ընդհանրապես ազատվում են մաքսատուրքից: Ստացվում է, որ սույն օրենքի նախագծի ընդունման դեպքում գնաճ տեղի չի ունենա:

Մաքսատուրքի բարձրացումը կազդի միայն ոչ ԱՊՀ երկրներից՝ Չինաստան, Թուրքիա, Միացյալ Արաբական Էմիրություններ եւ այլն, ներկրվող ապրանքների վրա, որոնց ինքնարժեքը այնքան ցածր է, որ նախատեսվող մաքսատուրքի 5% ավելացումը եւս որեւէ կերպ չի առաջացնի գնաճ: Ավելին, հիշյալ ավելացումը հնարավորություն կտա փոքր ինչ աշխուժացնել մրցակցությունը:

Նախագիծը ըստ եռթյան նաեւ ստեղծում է պայմաններ երկրի բյուջե լրացուցիչ դրամական մուտքեր ապահովելու համար:

**Հեղինակներ՝** [Արա Նռանյան](#), [Վարդան Բոստանջյան](#), [Գոհար Ենոբյան](#), [Հակոբ Հակոբյան](#), [Արծվիկ Մինասյան](#)